

**2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ**  
**ԾՐԱԳՐԻ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ**  
**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ**

**Պետական մարմինը՝**

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե*

**Հայտի հաստատման ամսաթիվը՝**

< >

# 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2025-2027 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտային քաղաքականության գերակա նպատակն է՝ ապահովել մատչելի, որակյալ և մրցունակ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն:

Մինչև 2027 թվականը նախատեսվում է հասնել հետևյալ արդյունքային ցուցանիշներին՝

- Ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների տեսակարար կշիռը բարձրագույն կրթություն ստացողների մեջ 18 % -ից՝ 20 %-ի,
- սոցիալապես անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ուսանողների տեսակարար կշիռն ընդհանուր ուսանողների թվաքանակի մեջ 8%-ից՝ 5%-ի,
- ազգային փոքրամասնություններին բակալավրի կրթական աստիճանով հատկացված անվճար տեղերը 2027 թվականին հասցնել 28-ի,
- Կատարողականի արդյունքային ցուցանիշների հիմքով ֆինանսավորվող բուհերի թիվը 2025 թվականին հասցնել առնվազն 3-ի,
- Բուհերի միջև միջբուհական և միջառարկայական փորձարարական թեմատիկ լաբերի թիվը 2026 թվականին հասցնել առնվազն 2-ի:
- Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ գերատեսչական) խոշորացում՝ ըստ ուղղությունների (այդ թվում՝ գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորում), հաշվի առնելով նաև մարզերի զարգացման ուղղությունները՝ մինչև 8 /6/:
- Նախատեսվում է, որ 2027 թվականից պետական ֆինանսավորում և աջակցություն կտրամադրվի միայն խոշորացված բուհերին և դրանց հետ միավորված գիտական կազմակերպություններին:  
Խոշորացված բուհերում և դրանց հետ միավորված գիտահետազոտական կազմակերպություններում նախատեսվելու է աշխատավարձերի կրկնապատկում: Էականորեն վերանայվելու է դասախոսների աշխատանքի կառուցվածքը՝ էական շեշտադրում անելով հետազոտական բաղադրիչի ավելացման վրա, իսկ գիտական աշխատողների համար ստեղծվելու են մրցունակ հետազոտական աշխատանքներ և մշակումներ իրականացնելու անհրաժեշտ պայմաններ:
- Առանձին պետական ֆինանսավորում է տրամադրվելու գիտական հետազոտությունների և մշակումների համալիր ծրագրերին, քանի որ խոշորացման արդյունքում համալսարանական կլաստերներն ունենալու են համապատասխան հետազոտությունների և մշակումների համար նյութատեխնիկական ամբողջական համալիր, ինչպես նաև փորձարկումների և նախատիպավորման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ նպաստելով մշակումների տեխնոլոգիական պատրաստվածության առնվազն 6-րդ մակարդակի հաղթահարմանը:
- Ենթակառուցվածքների համալրման և արդիականացման պետական ծրագրերի հիմնական մասն ուղղվելու է կլաստերների հզորությունների համալրմանը:

- Կլաստերներում ուսանողների, ակադեմիական և օժանդակ անձնակազմի համար ապահովվելու են կեցության մատչելի և արժանապատիվ պայմաններ կամ բնակարանի ձեռք բերման արտոնություններ, ինչպես նաև կամպուսները հագեցած են լինելու կենցաղի, ինտելեկտուալ ու ֆիզիկական ակտիվ և առողջ ժամանցի ենթակառուցվածքներով և թիրախային խմբի համար դրանցից օգտվելու հատուկ պայմաններով:

Քաղաքականության նպատակների և թիրախների մասին տեղեկատվությունն ամփոփված է կից՝ Հավելված 3-ի Մաս 3-ում ներկայացված աղյուսակում:

## **2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ**

1111 - Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ծրագրի նպատակների և թիրախների ապահովման նպատակով 2025-2027 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող հիմնական ծախսային ուղղություններն՝ ըստ գերակայությունների ներկայացված են ստորև.

### **1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր**

*12001 Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ*

*12002 Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում*

*12003 Ասպիրանտուրական կրթաթոշակներ գիտական հաստատություններում սովորողներին*

*12004 Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում*

*12005 Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում*

*12006 Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում*

*12007 Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին, կեցության վարձավճարի փոխհատուցում մարզաբնակ և օտարերկրյա ուսանողներին*

*12008 Ուսումնական վարկերի տրկոսավճարների մասնակի փոխհատուցում*

*11003 Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ*

*11011 Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ*

*11003 Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ*

Բոլոնիայի գործընթացին հեղինակություն խմբում աշխատանքային և խորհրդարարական խմբերում ՀՀ մասնակցություն, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ինտեգրմանն ուղղված բարեփոխումների իրականացման աշխատանքներ՝ Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակների (ՈՈՇ) մշակում և հաստատում, ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկի արդիականացում (այդ թվում՝ կարգավորվող և միջոլորտային մասնագիտություններ)՝ ձևավորելով մասնագիտական խորհուրդներ, լիցենզավորման նոր պայմանների, նախահավատարմագրման, հավատարմագրման նոր չափանիշների մշակում, Բարձրագույն կրթության միջազգայնացման, շարժունության հնարավորությունների ընդլայնում:

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
<p>Բարձրագույն կրթության հասանելիության և մատչելիության ապահովում</p>	<p>ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն « Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցության հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:»: Իսկ ըստ 86-րդ հոդվածի 13-րդ կետի՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը: «Բարձրագույն և հեղինակական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված բարձրագույն և հեղինակական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից է բարձրագույն և հեղինակական մասնագիտական կրթության մատչելիությունը: Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հեղինակական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներից է պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերում մասնագետների պատրաստմանն</p>

	<p>աջակցելը, իսկ 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված է, որ պետությունն ապահովում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության զարգացում հետևյալ ձևերով՝</p> <p>5) պետության պահանջներին համապատասխան՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին ֆինանսական աջակցության ապահովում.</p> <p>6) օրենքով սահմանված կարգով բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգ ուսանողներին և ասպիրանտներին պետական ֆինանսական օժանդակություն (կրթաթոշակներ, ուսման վարձիփոխհատուցում (լրիվևմասնակի (զեղչ), կրթական դրամաշնորհներ, վարկեր)::</p> <p>Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է պետական պատվեր՝ ըստ մասնագիտությունների, ուսումնական հաստատությունների նպատակային ուսուցմամբ ուսանողներին, այդ թվում՝ սահմանամերձ, ինչպես նաև բարձրլեռնային բնակավայրերի, և երաշխավորում է բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային կարգով անվճար՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ բարձրագույն և հետբուհական կրթություն ստանալու իրավունքը:</p> <p>Միաժամանակ, ուսման վճարի լրիվ փոխհատուցումից օգտվում են նաև օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող անձինք՝ 1-ին, 2-րդ խմբի և «մանկուց հաշմանդամ» կարգավիճակ ունեցող անձինք՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, առանց ծնողական խնամքի մնացած անձինք՝ մինչև իրենց 23 տարին լրանալը/այս կարգավիճակի ուսանողները ստանում են նաև կրթաթոշակ 150 տոկոսի չափով/ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի , ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս</p>
--	---

1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակները՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի: Առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց, զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսից մինչև ծրագրի ավարտը, իսկ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին ուսանողական նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են 1-ին կուրսի սկզբում և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն որոշմամբ հաստատված կարգով, համաձայն որի, պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է ոչ միայն Կառավարության կողմից հատկացված տեղերում ընդունված ուսանողներին, օրենքներով նախատեսված արտոնություններ ունեցողներին, նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին, մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով, այլ նաև ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընդունվածների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության

*սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող խմբերին:*

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքի 81-րդ կետի 3-րդ ենթակետի ժա. (բարձրագույն և մասնագիտական կրթություն ստանալու համար ֆինանսական աջակցության նոր մեխանիզմների մշակում և բազմազանացում, այդ թվում՝ կրթաթոշակների տրամադրման մեխանիզմների էական լավարկման միջոցով) և 82-րդ կետի 4-րդ ենթակետի ը. (մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններին պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մասնագիտություններով պետական աջակցության տրամադրման նոր սկզբունքների և մեխանիզմների ներդրում) պարբերություններում ամրագրված դրույթների հիման վրա ելնելով կրթաթոշակի տրամադրման քաղաքականության նոր մոտեցումներից, ընդունվել է ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N 1430-Ն որոշումը (որով կրթաթոշակ է տրամադրվում պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով /ԲՏՃՄ ուղղությամբ մասնագիտական մանկավարժություն/ սովորողներին, 70-77 000 դրամ՝ ըստ առաջադիմության, ինչպես նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքով նախատեսված ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակում ունեցողներին՝ 50000 դրամ):

ՀՀ բուհերում, բացառությամբ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, կրթաթոշակի շեմ սահմանված չէ (գործում են առանձին անվանական կրթաթոշակներ): «Առանց ծնողական խնամքի

	<p>մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի ընդունուման պահից (2002 թվական) առանց ծնողական խնամքի մնացած երեխաները ստացել են 7500 դրամ պետական կրթաթոշակ՝ ՀՀ վարչապետի 1999 թվականի ապրիլի 14-ի N 217 որոշմամբ սահմանված 5000 դրամ կրթաթոշակի 150 տոկոսի չափով:)</p> <p><i>ՀՀ կառավարության 2024թ. փետրվարի 1-ին N 150-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ են կատարվել, որով կարգավորում են բուհերում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրվող կրթաթոշակի տրամադրման գործընթացը: կարգավորում են բուհերում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրվող կրթաթոշակի տրամադրման գործընթացը: Մասնավորապես սահմանվել են, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վճարվում է կրթաթոշակ՝ ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N 1430-Ն որոշման 2-րդ կետով սահմանված 50 000 դրամ կրթաթոշակի՝ 150 տոկոսի չափով՝ մինչև սովորողի 23 տարին լրանալը, որը կազմում է 75 000 դրամ: Ընդ որում՝ միաժամանակ այլ պետական կրթաթոշակների հավակնելու դեպքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող սովորողը կարող է օգտվել դրանցից առավելագույն չափ ունեցող կրթաթոշակի իրավունքից, որի դեպքում ևս կիրառվում է առավելագույն չափի 150 տոկոսը:</i></p> <p>Այս կարգավորումը թույլ է տալիս պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող</p>
--	--



	<p>սովորողներին հավակնել մինչև 70 000-77 000 դրամ կրթաթոշակի 150 տոկոսին (105 000 – 115 500):</p> <p>Կարգը նախատեսված է նաև մինչև 2023-2024 ուսումնական տարին սահմանված կարգով բուհ ընդունված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող սովորողների համար, այսինքն սույն կարգավորումները տարածվելու են թիրախային խմբի բոլոր սովորողների վրա:</p> <p>Այս կարգավորումը թույլ է տալիս պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող սովորողներին հավակնել մինչև 70 000-77 000 դրամ կրթաթոշակի 150 տոկոսին (105 000 – 115 500):</p> <p>Կարգը նախատեսված է նաև մինչև 2023-2024 ուսումնական տարին սահմանված կարգով բուհ ընդունված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող սովորողների համար, այսինքն սույն կարգավորումները տարածվելու են թիրախային խմբի բոլոր սովորողների վրա:</p> <p>2023 թվականի սեպտեմբեր ամսին Լեռնային Ղարաբաղի շուրջ ձևավորված դրությամբ պայմանավորված ԼՂ-ից տեղահանված ուսանողներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով փոխհատուցվել է վերոհիշյալ ուսանողների ուսման վարձը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N° 1762-Լ և 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N° 2291-Լ որոշումները: 2023 թվականի ընթացքում միջոցառման շրջանակում շուրջ 2700 ուսանողի հատկացվել է ուսման վարձ փոխհատուցում՝ մոտ 695 մլն:</p>
--	--

	<p>Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության՝ մինչև 2030թ. զարգացման պետական ծրագրի» 78-րդ և 81-րդ կետերի դրույթներից:</p>
<p>Եվրոպական բարձրագույն կրթական փարաօքի ամբողջական ինտեգրմանն ուղղված բարեփոխումների իրականացում</p>	<p>2005 թվականի մայիսի 19-20 Բերգենի կոմյունիկեի Հայաստանի Հանրապետության վավերացումից Բոլոնիայի գործընթացին Եվրոպական բարձրագույն կրթության փարաօքի սրեղծման Բոլոնիային գործընթացին անդամակցությամբ, որով ստանձնել է այդ գործընթացով սահմանված բարձրագույն կրթության միջազգային սկզբունքների իրականացումը: ՀՀ-ն կազմել է Եվրոպական բարձրագույն կրթական փարաօքի մաս, որի նպատակն է ձևավորված համագործակցության արդյունքում ապահովել բարձրագույն կրթության համակարգի համադրելիությունը և համատեղելիությունը վերոնշյալ փարաօքի ուղղություններին: Ապահովել ԵԲԿՏ-ի աշխատանքներին Հայաստանի կայուն մասնակցության ապահովում՝ խթանելով ազգային բարձրագույն կրթության համակարգում ընթացող բարեփոխումների հետևողական իրականացումը:</p> <p>ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 4-րդ դրույթից:</p> <p>Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության՝ մինչև 2030թ. զարգացման պետական ծրագրի» 78-րդ և 81-րդ կետերի դրույթներից:</p>
<p>Ցանցային կրթական համակարգերի ներդրում և ենթակառուցվածքների բարելավում</p>	<p>«ՀՀ կրթության՝ մինչև 2030թ. զարգացման պետական ծրագրի» 81-րդ և 82-րդ կետերի դրույթներից:</p> <p>ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 16-ի N 351-Լ որոշմամբ հաստատվել է վերոնշյալ օրենքից բխող գործողությունների ծրագիրը, որի «Բարձրագույն կրթություն» բաժնի 2.2.1 կետով նախատեսվում է Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝</p>

	<p>գերատեսչական) խոշորացում՝ ըստ ուղղությունների (այդ թվում՝ գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորում), հաշվի առնելով նաև մարզերի զարգացման ուղղությունները</p>
<p>Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ</p>	<p>«Բարձրագույն և հեղբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 15-րդ կետով սահմանված է՝ «որակի ապահովում՝ պետական կրթական չափորոշիչներին և հավաքարմագրման չափանիշներին կրթության որակի համապատասխանության և բարելավման անընդհատ գործընթաց»: Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հեղբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հեղբուհական մասնագիտական կրթության համակարգում ուսուցման որակի ներքին (ներբուհական) ու արտաքին գնահատման և հավաքարմագրման միջազգային (եվրոպական) չափանիշների ներդրումը, հավաքարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավահավասարության ապահովումը՝ անկախ սեփականության ձևից:</p> <p>ՀՀ Կառավարության 2008 թ-ի նոյեմբերի 27-ի N 1486-Ն որոշմամբ ստեղծվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը:</p>
<p>Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ</p>	<p>«Բարձրագույն և հեղբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված են Բարձրագույն և հեղբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, որոնց թվում եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հեղբուհական կրթության որակավորման աստիճանների համեմատելիությունը և</p>

	<p>դիպլոմների, դրանց ներդիրների ճանաչելիությունն ապահովելը, ուսանողների միջազգային շարժունությանը նպաստելը:</p> <p>Միաժամանակ 2005 թվականին ՀՀ ազգային ժողովը վավերացրել է Եվրոպայի խորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Լիսաբոնի ճանաչման կոնվենցիան, որի նպատակն է դյուրացնել կրթությունը շարունակելու համար եվրոպական փորձաշրջանի յուրաքանչյուր Կողմի ուսումնական հաստատությունների ուսանողների մուտքը մյուս Կողմերի բարձրագույն ուսումնական հաստատություններ և բարելավել եվրոպական փորձաշրջանի որևէ երկրում ստացած ուսման, ուսման վկայականների, վկայագրերի և գիտական աստիճանների փոխադարձ ճանաչման պրակտիկան:</p> <p>ՀՀ Կառավարության 2005թ-ի մարտի 31-ի N 699-Ն որոշմամբ ստեղծվել է «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» (ԱՓՇԱՏԿ) հիմնադրամ: Կառավարության նույն որոշմամբ հաստատվել է նաև կենտրոնի կանոնադրությունը, որի համար հիմք է ծառայել ՅՈՒՆԵՍԿՕ/Եվրախորհրդի կողմից մշակված ազգային ակադեմիական կենտրոնների գործունեության և ծառայությունների մասին միասնական եվրոպական հիմնադրույթները: ԱՓՇԱՏԿ-ը 2006թ. հունվարից դարձել է միջազգային ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի լիիրավ անդամ:</p> <p>«ՀՀ կրթության՝ մինչև 2030թ. զարգացման պետական ծրագրի» 83-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 8-16-րդ ենթակետերի դրույթներից:</p>
--	--

<p>Բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրվող ֆինանսական միջոցների արդյունավետության բարձրացում</p>	<p>2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի 4.3 Կրթություն բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումներին միտված 6-րդ դրույթից, որով ակնկալվում է բուհերին տրամադրվող ֆինանսական միջոցների նոր մեխանիզմի ներդրմամբ,</p> <p>ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ցանկի «Կրթություն» բաժնի 16-րդ նպատակի 16.1 և 16.2 միջոցառումներից:</p>
<p>Բնագիտական ուղղություններով բարձրագույն կրթության որակի զարգացում՝ միջբուհական և միջառարկայական փորձարարական թեմատիկ լաբերի ստեղծում և ծրագրերի իրագործում:</p>	<p>2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի 4.3 Կրթություն բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումներին միտված 13-րդ դրույթից,</p> <p>ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ցանկի «Կրթություն» բաժնի 22-րդ նպատակի 22.1 և 22.2 միջոցառումներից:</p> <p>Միջոցառման իրականացման նպատակն է նաև մոտենալ</p> <p>Հայաստանի մինչև 2050թ. վերափոխման ռազամավարության 1-ին «Կիրթ և կարողունակ քաղաքացի» ունենալու մեզանպատակի 1.1.2 ցուցանիշին և «Աշխարհի լավագույն 500 բուհերի վարկանիշային աղյուսակում 2 հայաստանյան բուհերի ներառվածություն» 1.3.1 ցուցանիշին :</p>
<p>Բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության սկզբունքների և մեխանիզմների վերանայում և ներառականության ընդլայնում:</p>	<p>ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»</p>

<p>Ազգային փոքրամասնություններին օժանդակելու նպատակով բարձրագույն կրթության բակալավրի կրթական աստիճանով (այդ թվում՝ անընդհատ ու ինտեգրացված կրթական ծրագրերով) յուրաքանչյուր տարի մինչև 7 անվճար տեղերի հատկացում:</p>	<p>բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 7-րդ դրույթից,</p> <p>ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ցանկի «Կրթություն» բաժնի 17-րդ նպատակի 17.1 միջոցառումից.</p> <p>Յուրաքանչյուր տարի ՀՀ բուհերի առկա ուսուցման ընդունելության հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշմամբ, համապատասխան մասնագիտությունների մրցութային քննություններից դրական միավորներ ստացած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող դիմորդներին պահուստային տեղերից հատկացվում են անվճար ուսուցման տեղեր: Ազգային փոքրամասնություններին հատկացվող անվճար տեղերի բաշխման հարցը չի կարգավորվում ենթաօրենսդրական իրավական ակտերով և չի իրականացվում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ընդունելություն ՀՀ գործող պետական կամ հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատություններ՝ ՀՀ կառավարության որոշմամբ տվյալ տարվա ընդունելության համար հատկացված անվճար տեղերի հաշվին: Ուստի անհրաժեշտ է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող դիմորդներին անվճար տեղերի հատկացման հարցին տալ իրավական հենք:</p>
<p>Տարածաշրջանային լեզուներով կրթության ապահովում</p>	<p>ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նոր օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 8-րդ մասից (օրենքն Ազգային ժողովում 2021թ. մարտի 24-ին ընդունվել է 2-րդ ընթերցմամբ),</p> <p>ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»</p>

	<p>բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 10-րդ դրույթոց,      ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ցանկի «Կրթություն» բաժնի 18-րդ նպատակի 18.1 և 18.2 միջոցառումներից.</p>
<p>Բարձրագույն կրթության մակարդակում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (S&amp;S) կիրառմամբ կրթության կազմակերպման գործընթացի արդիականացում՝ թվային հարթակի ներդրմամբ:      Կրթության կառավարման համակարգի բարեփոխումներ</p>	<p>ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 8-րդ դրույթից,      ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ցանկի «Կրթություն» բաժնի 2-րդ նպատակի 2.6 և 2.7 միջոցառումներից:</p>
<p>Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակների (ՈՈՇ) մշակում և հաստատում ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով:      Կրթական ծրագրերի ապահովում և բարելավում</p>	<p>ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նոր օրենքի նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետից (օրենքն Ազգային ժողովում 2021թ. մարտի 24-ին ընդունվել է 2-րդ ընթերցմամբ), ինչպես նաև      ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության բարեփոխումների 3-րդ դրույթից,      ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ցանկի «Կրթություն» բաժնի 19-րդ նպատակի 19.1 և 19.2 միջոցառումներից:</p>

	<p>Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության՝ մինչև 2030թ. զարգացման պետական ծրագրի» 78-րդ և 81-րդ կետերի դրույթներից: Գլխավոր նպատակն է՝</p> <p>Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակի հետագա կատարելագործում և ամբողջական ներդրում՝ ապահովելով որակավորումների համադրելիությունը</p>
<p>Հայաստանի Հանրապետության աջակցությամբ օտար պետություններում հայագիտության զարգացման շարունակականության ապահովում</p>	<p>«ՀՀ կրթության՝ մինչև 2030թ. զարգացման պետական ծրագրի» 77-րդ կետի 3) ենթակետի և 83-րդ կետի 2) ենթակետի դրույթներից: Գործընթացի գլխավոր նպատակն է նպաստել միջազգային կրթական տիրույթում Հայաստանի դերի բարձրացմանը, մասնավորապես՝ հայերենի նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելով և հայերենը տարածելով:</p>

2025-2027 թ.թ. ՄԺԾԾ հատվածում ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատվության ներքո գտնվող բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական քաղաքականության գծով կառավարության ծախսային քաղաքականության հակիրճ շարադրանքը ներկայացված է Հավելված 11-ով՝ ներկայացված ձևաչափին համապատասխան:

### 3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

#### 3.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Պարտադիր և հայեցողական ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է Հավելված 1-ի Ձևաչափ 1 -ում ներկայացված աղյուսակում (գոյություն ունեցող պարտավորությունների մասով):

Իսկ յուրաքանչյուր միջոցառման համար պարտադիր և հայեցողական ծախսերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 1-ի Ձևաչափ 2 -ում (գոյություն ունեցող պարտավորությունների մասով):

#### 3.3 Նոր նախաձեռնություններ

Նպատակ 2. Բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացում



2.2. Ցանցային կրթական համակարգերի ներդրում և ենթակառուցվածքների բարելավում

2.2.1 Պետական բուհերի խոշորացում

Նոր նախաձեռնությունը բխում է «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքի հավելվածի 81-րդ կետի 2-րդ ենթակետի ը. պարբերությունից (ը. պետական բուհերի խոշորացում՝ ըստ ուղղությունների, գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորում՝ հետազոտությունների որակի և մրցունակության բարձրացման, ինչպես նաև արդյունավետ սերնդափոխության նպատակով):

Օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին 2023 թվականի մարտի 16-ի N 351-Լ որոշման հավելված 1-ի՝ «Բարձրագույն կրթություն» բաժնի Նպատակ 2-ի «Բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացում» 2.2 «Ցանցային կրթական համակարգերի ներդրում և ենթակառուցվածքների բարելավում» մասի 2.2.1՝ կետից (Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ գերատեսչական) խոշորացում՝ ըստ ուղղությունների (այդ թվում՝ գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորում), հաշվի առնելով նաև մարզերի զարգացման ուղղությունները):

Խոշորացման գործընթացի նպատակը ՀՀ-ում բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացումն է, որը կապահովի ռեսուրսի (ներառյալ՝ մարդկային) առավելագույն օպտիմալ և արդյունահենք տեղաբաշխում, համակարգի գործընթացային, ծախսային և կառավարման արդյունավետության բարձրացումը, կրթության գրավիչ միջավայրի ստեղծումը՝ ցանցային կրթական համակարգերի ներդրմամբ, բուհերի ներքին արդյունավետության բարձրացումը, մինչև 100% պետական ֆինանսավորմամբ, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցային միջավայրի ապահովումը և միջոլորտային ու հետազոտական ուղղությունների խթանումը:

Որպես բարձրագույն կրթության համակարգում առկա խնդիրների առաջարկվող լուծում, ըստ ուղղությունների պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների խոշորացումը, այդ թվում՝ գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորմամբ, սերտորեն կապված է Ակադեմիական քաղաքի ստեղծման հետ՝ ապահովելու որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայր:

Նոր նախաձեռնության արդյունքում ակնկալվում է Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (նաև գերատեսչական) ըստ ուղղությունների խոշորացմանն, այդ թվում՝ գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորմանն ուղղված բուհերի **իրագործելիության ուսումնասիրություն /Feasibility study/ և ըստ ուղղությունների համապատասխան ծրագրային/հայեցակարգային փաթեթների /առնվազն 6 փաթեթ/ մշակում**, որոնք կներառեն խոշորացված (միացած գիտահետազոտական կազմակերպությունների հետ) բուհերի կառուցվածքը, կառավարման համակարգը, իրականացվող կրթական ծրագրերն ու գիտահետազոտական ուղղությունները, ֆինանսավորման մեխանիզմները, ինչպես նաև կարողունակությունների զարգացման ծրագրերի անհրաժեշտ պայմաններ և այլն:

**Սպասվող Օգուտները** Ըստ ուղղությունների մշակված հայեցակարգային փաթեթների հիման վրա կնախաձեռնվեն խոշորացման գործընթացներ. զարգացման հավակնոտ և փոխկապակցված քայլերի դեպքում խոշորացված բուհերը կարող են հավակնել ընդգրկված լինելու միջազգային վարկանիշային աղյուսակների լավագույն 500-ի մեջ, ինչպես նաև բարձրագույն կրթության ոլորտում տարածաշրջանային կենտրոններ դառնալուն, շրջանավարտները կունենան միջազգայնորեն ճանաչելի մասնագիտական որակավորում, որը հնարավորություն կտա նրան կարճ ժամանակում ձեռք բերելու արժանապատիվ աշխատանք կամ սկսել սեփական բիզնեսը: Կապահովվեն «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքով սահմանված ռազմավարական ուղղություններով նախանշված արդյունքները, Գործընթացը կնպաստի

տարածաշրջանում և մասնավորապես եվրասիական տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության, որպես կրթական ծառայություններ և արտադրանք արտահանող երկրի դիրքավորմանը և միջազգային հարթակներում հայկական կրթական ծառայությունների գրավչության բարձրացմանը:

### **Նկարագրությունը**

Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (նաև գերատեսչական) ըստ ուղղությունների խոշորացմանն, այդ թվում՝ գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորմանն ուղղված բուհերի իրագործելիության ուսումնասիրության /Feasibility study/ և ըստ ուղղությունների համապատասխան ծրագրային/հայեցակարգային փաթեթների մշակման համար կներգրավվեն ինչպես միջազգային, այնպես էլ տեղացի փորձագետներ: Խոշորացման ծրագրի շրջանակներում նախատեսվում է բուհերի կառավարման համակարգի վերանայում, խոշորացված բուհերում կառավարման այլընտրանքային մոդելների փորձարկում, ժամանակավոր կառավարիչների վերապատրաստում, նշանակում, պրոֆեսորադասախոսական կազմի և գիտաշխատողների կարողությունների զարգացման ծրագրեր, աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան նոր մասնագիտությունների և կրթական ծրագրերի ներդրում:

Այս առումով միջազգային համագործակցային կապեր կհաստատվեն նախանշված յուրաքանչյուր ուղղություններով /դասական, բժշկական, կրթական, արվեստների, տեխնոլոգիական, սպայական/ աշխարհի առաջատար բուհերի հետ՝ բարձրագույն կրթության ոլորտում լավագույն փորձի փոխանակման, ինչպես նաև Ակադեմիական քաղաքի հայեցակարգի իրագործմանն աջակցելու նպատակով: Այս համատեքստում Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն ստորագրել է փոխըմբռնման հուշագիր Լոնդոնի արվեստների համալսարանի հետ /երկրորդ ուժեղագույն բուհն է իր ոլորտում/, նախնական համաձայնություն է ձեռք բերվել աշխարհի լավագույն 50 տեխնիկական բուհերից մեկը հանդիսացող Մյունխենի տեխնիկական համալսարանի հետ, աշխատանքներ են տարվում աշխարհի լավագույն այլ բուհերի ներգրավման ուղղությամբ:

«ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն նախատեսված է պետական բուհերի խոշորացում՝ ըստ ուղղությունների, գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորում՝ հետազոտությունների որակի և մրցունակության բարձրացման, ինչպես նաև արդյունավետ սերնդափոխության նպատակով, բուհերի խոշորացման ծրագրի շրջանակներում բուհերի կառավարման համակարգի վերանայում, խոշորացված բուհերում կառավարման այլընտրանքային մոդելների փորձարկում, ժամանակավոր կառավարիչների նշանակում: Կստեղծվեն 100% պետական ֆինանսավորմամբ մինչև ութ բուհ՝ չբացառելով վճարովի ուսուցման հնարավորությունը՝ համալրելով դրանք որակյալ կրթության կազմակերպման և հասանելիության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներով, արդիականացնելով լաբորատոր և նորարարական ենթակառուցվածքներն ու միջբուհական, միջառարկայական փորձարարական թեմատիկ լաբորատորիաներն ու գիտակրթական ամբիոնները, խթանելով նորարարական ստարտափ և ձեռնարկատիրական ինկուբատոր էկոհամակարգերի ստեղծումը բուհերում և դրանց հետագա առևտրայնացումը: Նախատեսվում է նաև իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի և գիտաշխատողների կարողությունների զարգացման ծրագրեր, աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան նոր մասնագիտությունների և կրթական ծրագրերի ներդրում, բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացումը, «կրթություն-գիտություն-աշխատաշուկա» կապի ամրապնդումը՝ միաժամանակ սահմանելով նոր լիցենզավորման, հավատարմագրման չափանիշներ՝ որակյալ բարձրագույն կրթություն իրականացնելուն միտված: Բուհերի խոշորացումը կնպաստի տարածաշրջանում և մասնավորապես եվրասիական տարածաշրջանում Հայաստանի՝ որպես կրթական ծառայություններ և արտադրանք արտահանող երկրի դիրքավորում և միջազգային հարթակներում հայկական կրթական ծառայությունների գրավչության բարձրացում:

2021-2026 թվականների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի» 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» կետի 4.3 «Կրթություն» մասով սահմանված՝ բարձրագույն կրթության ոլորտի ռազմավարական նպատակներին և թիրախներին հասնելու համար բուհերի խոշորացման արդյունքում ակնկալվում է. յուրաքանչյուր շրջանավարտ կունենա միջազգայնորեն ճանաչելի մասնագիտական որակավորում, որը հնարավորություն կտա նրան կարճ ժամանակում ձեռք բերելու արժանապատիվ աշխատանք կամ սկսել սեփական բիզնեսը, բարձրագույն ուսումնական հաստատությունները կունենան եվրոպական չափանիշներին համապատասխան որակի հավաստագրեր, համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում, բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում կրթական ծրագրերի արդիականացում՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակի և աշխատաշուկայի պահանջներին, կարողությունների վրա հիմնված և միջազգայնորեն ընդունված չափանիշներին, բարձրագույն կրթական ծրագրերի ու մասնագիտությունների ցանկերի վերանայում, կրթական ծրագրերի խոշորացում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ծավալում, ենթակառուցվածքների արդիականացում, գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորման արդյունքում հետազոտությունների որակի և մրցունակության բարձրացում: Բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության թափանցիկության և հրապարակայնության համար անհրաժեշտ մեխանիզմների և պահանջների սահմանում՝ ապահովելու հաստատության պատասխանատվությունը և հաշվետվողականությունը անմիջական շահառուների, պետության ու հասարակության առջև:

Առնվազն չորս բուհ ընդգրկված կլինի միջազգային վարկանիշային (Թայմսի բարձրագույն կրթության՝ աշխարհի համալսարանների վարկանիշ – Times Higher Education World University Rankings, Աշխարհի համալսարանների քուէս վարկանիշ - QS World University Rankings կամ Աշխարհի համալսարանների

ակադեմիական վարկանիշ - ARWU, Shanghai Ranking) աղյուսակների լավագույն 500-ի մեջ.

Առնվազն կրկնապատկել միջազգային ուսանողների թիվը՝ բարձրացնելով բարձրագույն կրթության համակարգի միջազգային հեղինակությունը: Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ բարձրագույն կրթությամբ մրցունակ կադրերի պատրաստում. այն է՝ բուհն ավարտելուց հետո ըստ մասնագիտության կաշխատի շրջանավարտների 90%-ը, բարձրագույն կրթական համակարգի յուրաքանչյուր շրջանավարտ կունենա միջազգայնորեն ճանաչելի մասնագիտական որակավորում, որը հնարավորություն կտա նրան կարճ ժամանակում ձեռք բերել արժանապատիվ աշխատանք կամ սկսել սեփական բիզնեսը, որն էլ իր հերթին կամրապնդի կրթություն-գիտություն-աշխատաշուկա փոխգործակցությունը:

## **8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ**

*Ներկայացնել 2025-2027թթ ժամանակահատվածի համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատասխանատվության ներքո գտնվող բարձրագույն կրթության ոլորտի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը (ներառյալ գոյություն ունեցող պարտավորությունները)՝ ներկայացված է Հավելված 8 -ում ներկայացված ձևաչափին համապատասխան:*

## **9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ**

*Ռիսկերի վերլուծության վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է Հավելված 10 -ում ներկայացված ձևաչափին համապատասխան:*